

կայսերական նշանաւք, փութայր վաղվաղակի գիրամանն կատարել: 16 Եւ հրեշտակս արձակեալ այնուհետեւ ի գաւառս կէս ազգին Յայոց յիշխանութեանն<sup>1</sup> կայսեր, բազմութիւն մանկտոյ<sup>2</sup> ժողովել եւ նոցին ռոճիկս կարգել ի պատեհագոյն<sup>3</sup> տեղիս, յորս<sup>4</sup> եւ երանելին զվարդապետութիւնն իւր ի գործ արկեալ, եւ ժողովելոցն քաղցրացուցաներ<sup>5</sup>:

17 Ապա յետ այնորիկ ձեռն արկաներ զդժպատեի եւ զկամակոր<sup>6</sup> բարբարիանոս<sup>7</sup> աղանդն<sup>8</sup> քննելոյ: 18 Եւ իբրեւ ոչինչ գտաներ հնարս յուղղութիւն անելոյ, առեալ ի գործ արկաներ զթշուառացուցիչ գաւազանն<sup>9</sup>, ծանրագոյն<sup>10</sup> պատուհասիւք ի բանդս, ի տանջանս, ի գելարանս<sup>11</sup>: 19 Իսկ յորժամ<sup>12</sup> այնու եւս պակասեալք ի փրկութենէն գտանէին, խորտակեալս<sup>13</sup>, ապա խանձեալս<sup>14</sup>, մրեալս<sup>15</sup> եւ գունակ գունակ խայտառակեալս<sup>16</sup>, եւ յաշխարհէն<sup>17</sup> կորզէին:

20 Իսկ երանելոյն զիւր վարդապետութեանն պայման արարեալ սակեալ<sup>18</sup> եւ վճարեալ: 21 Եւ բազում շնորհագիր մատեանս գհարցն եկեղեցւոյ ստացեալ, ծովացուցաներ զվարդապետութեանն զխորութիւն, եւ լցեալ զեղոյր ամենայն բարութեամբք:

22 Յայնմ ժամանակի եկեալ<sup>19</sup> դիպեր նմա այր մի երեց աղուան ազգաւ<sup>20</sup>, Բենիամէն անուն. եւ նորա հարցեալ եւ քննեալ զբարբարոս զբանս աղուաներէն լեզուին, առնէր ապա նշանագիրս ըստ վերնապարգել կորովի

---

1 *b* իշխանութեանն

2 *e* մանկտոյ

3 *b* ի պատեհագոյն

4 *acdel* յոր

5 *b* քաղցրացուցաներ

6 *b* զկամարակոր

7 *c* բարբարոսական

8 *b* աղանդ

9 *bc* գազանն

10 *e* վ ծայրագոյն

11 *b* ի գլորանս / *c* եւ ի գելարանս

12 *b* որժամ

13 *c* խորտակեալք

14 *b* խանձեալք

15 *e* մրեալ

16 *b* խայտառակեալ

17 *c* չիք եւ (յաշխարհէն)

18 *բոլորը*՝ սակեալ / *U* սկսեալ

19 *v* եղեալ *փիւ*. եկեալ

20 *c* ազգաւ / *միւսն*. ազգով